Հաստատվեցի
ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի
իրավաբանական և նորմատիվային ապահովման վարչության պետ՝
/Ա. Հայրապետյան/
(Պատվիրատուի ղեկավարի անունը, ազգանունը)
(ստորագրությունը)
«24» 12 2009թ. Կ.Տ.

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

Անվանումը՝ ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Կառավարական N 3 տուն

1.2. Գնման առարկայի տեսակը

ապրանք ☐ աշխատանք ☑ ծառայություն ☐

1.3. Կարիքի բավարարման միջոցը

գնում ☑ վարձակալություն ☐ լիզինգ ☐

1.4. Գնման առարկայի համառոտ նկարագիրը՝ Հուշարձանների վերականգնման աշխատանքներ

1.5. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի

Անվանումը՝ ա/ «Սիվա» ՓԲԸ
բ/ «Կոտայքնախագիծ» ՍՊԸ
գ/ «Ջանգեզուր» ՓԲԸ

Հասցեն՝ ա/ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ Սպանդարյանի փ. 29/28
բ/ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության փ. 2
գ/ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Շաքե

1.6. Կնքված գնման պայմանագրի (կցվում է)

Ծածկագիրը՝ ա/ ՀՀ ՄՆ ԱԵՁԲ-53/1
բ/ ՀՀ ՄՆ ԱԵՁԲ-55/1
գ/ ՀՀ ՄՆ ԱԵՁԲ-56/1

Կնքման ամսաթիվը՝ ա/ 02.12.2009թ.
բ/ 02.12.2009թ.
գ/ 03.12.2009թ.

Գործողության ժամկետը՝ պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը

Գինը՝ ա / 9763000 /ինը միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար/ ՀՀ դրամ
բ/11115000 /տասնմեկ միլիոն հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամ
գ/ 6400000 / վեց միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ

1.7. Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ 2009 թվականի պետական բյուջե

1.8. Գնումների պաշտոնական տեղեկագրում կնքված պայմանագրի մասին տեղեկատվություն հրապարակելու նպատակով պատվիրատուն լիազոր մարմնին ներկայացրե՞լ է պահանջվող տեղեկատվության տեքստը

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել լիազոր մարմնին ուղարկված գրության

Ամսաթիվը _____ Համարը_____

2. Գնման գործընթացի նախապատրաստումը

2.1. Գնման պահանջի ծագման

իրավական հիմքը՝ ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N1347-Ն որոշում

Օրը, ամսաթիվը՝ 10.12.2009 թ.

2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝

Պատասխանատու ստորաբաժանում ☑ Տեխնիկական հսկողության հանձնաժողով ☐

Անվանումը՝ Պատասխանատու ստորաբաժանում(պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները վերապահվել է Դ. Առուշանյանին)

Իրավասությունը վերապահելու հիմքը՝ 23.01.09 թ. N 14-Ա հրաման

Ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը՝ Նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հուշարձանների վերականգնման բաժնի պետ՝ Դ. Առուշանյան

2.3 Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանն ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի՝

☐ գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, մրցակցության բացակայությամբ, լիցենզիայի առկայությամբ.

☑ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, պայմանով որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.

☐ պատվիրատուն, որևէ անձից կատարելով գնում, որոշում է լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով որ դրա գինը չգերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի քսան տոկոսը: Միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ:

2.4 Մեկ անձից գնման ձևի կիրառման ընտրված պայմանի հիմնավորումը՝ ֆինանսական միջոցները նախատեսված են ՀՀ Կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1347-Ն որոշմամբ «Սուրբ Հովհաննես եկեղեցու», «Բջնո ամրոց», «Վահանավանք» պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման աշխատանքների իրականացման համար հատկացվել է համապատասխանաբար՝ 9763000,11115000, 6400000 դրամ: Հաշվի առնելով, որ նշված աշխատանքները ներառված չեն պարբերական մրցույթի արդյունքներով կնքված պայմանագրերում և դրանք անհրաժեշտ է կատարել մինչև 30.12.2009 թ. ներառյալ, ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը անհնար է, ուստի գնման ընթացակարգը կազմակերպվել է մեկ անձից գնման ձևով:

Վերոնշյալ գնման ընթացակարգի արձանագրության պայմանագրերի N2՝ «Հուշարձանի վերականգնման աշխատանքային նախագիծ» հավելվածների խիստ ծավալուն լինելու պատճառով դրանց պատճենների պատրաստումն ու ներկայացումը բավականին դժվար է, շատ դեպքերում՝ աննպատակահարմար: Դրա հետ կապված՝ հավաստում ենք, որ ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի N 853-Ն որոշման «Գնման ընթացակարգերի արձանագրությունների ստուգման» կարգի 6-րդ կետի համաձայն՝ վերը նշված հավելվածի չներկայացումը չի հանգեցրել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքների փոփոխմանը, ինչպես նաև գնման գործընթացի մասնակիցների շահերի ոտնահարմանը:

Միաժամանակ հավաստում ենք, որ գնման ընթացակարգի արձանագրության ուշ ներկայացումը չի հանգեցրել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքների փոփոխմանը, ինչպես նաև գնման գործընթացի մասնակիցների շահերի ոտնահարմանը:

3. Գնման պայմանագրի կնքումը

3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներակայացնելու միջոցը՝

Մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում ☑

3.2. Տեղեկություններ այն անձանց (անձի) մասին որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

N	Անվանումը (անուն, ազգանունը)	Հասցեն	Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը կցվում է
1	2	3	4
	«Սիվա» ՓԲԸ	ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ,Սպանդարյանի փ. 29/28	N 02/3766 01.12.09 թ.
	«Կոտայքնախագիծ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության փ. 2	N 02/3768 01.12.09 թ.
	«Զանգեզուր» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզ, գ. Շաքե	N 02/3804 03.12.09 թ.

3.3. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ.

N	Անվանումը (անուն, ազգանունը)	Հասցեն	Առաջարկը ընդունելու հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը կցվում է
1	2	3	4
	«Սիվա» ՓԲԸ	ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ,Սպանդարյանի փ. 29/28	մտից 3-2365 02.12.09 թ.
	«Կոտայքնախագիծ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության փ. 2	N 16 02.12.09 թ.
	«Զանգեզուր» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզ, գ. Շաքե	N 0.3 03.12.09 թ.

3.4. Տեղեկություններ պատվիրատուի կողմից մերժված առաջարկությունների վերաբերյալ.

Մերժե՞լ է Պատվիրատուն որևէ առաջարկ՝ այն պայմանագրի կնքման նպատակով մասնակցին ուղարկված գրությամբ սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու պատճառով.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Առաջարկը ներակայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը)	Մերժման հիմքը	Մերժման մասին ծանուցելու ամսաթիվը
1	2	3

3.5. Բանակցություններ

Պատվիրատուն վարե՞լ է բանակցություններ

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Պատվիրատուին ներկայացնող անձի (անձանց)

Անուն, ազգանունը _____

Պաշտոնը _____

Մասնակցին ներկայացնող անձի (անձանց)

Անուն, ազգանունը _____

Պաշտոնը _____

Բանակցությունների արդյունքների համառոտ նկարագիրը _____

_____

4. Կասեցում

Կասեցրե՞լ է պատվիարատուն գնման գործընթացը.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Կացեման հիմքը՝ պատճառը _____

Կասեցման ժամկետը _____

5. Բողոքարկում

Բողոքարկվե՞լ են պատվիրատուի գործողությունները լիազոր մարմնին.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Բողոքը ներկայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը)	Բողոքի համառոտ նկարագիրը	Բողոքի մասին պատվիրատուին ծանուցելու ամսաթիվը
1	2	3

Ընդունե՞լ է լիազոր մարմինը որոշում ներկայացված բողոքի կապակցությամբ.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Որոշման համառոտ բովանդակությունը	Լիազոր մարմնի որոշումը ստանալու ամսաթիվը
1	2

6. Գնման ընթացակարգի արձանագրության վարման պատասխանատու անձի

Անուն, ազգանունը՝ Դ. Առուշանյան

Պաշտոնը՝ Նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հուշարձանների վերականգնման բաժնի պետ

Հեռախոսը /աշխ/ 58-58-51

Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը _____

«ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ԾՐԱԳՐՈՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՄՆ ԱՇՁԲ 53/1

Երկուսը դեկտեմբերի երկու հազար ինը թվականի, քաղաք Երևան:

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս նախարարի 23.01.2009 թ. N 14-Ա հրամանի հիման վրա գործող նախարարության աշխատակազմի իրավաբանական և վերահսկողության վարչության պետ՝ Ա. Հայրապետյանի մի կողմից և «Սիվա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Կատարող»), ի դեմս ընկերության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ Ս. Սարգսյան մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր») կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

I. Պայմանագրի առարկան

1. Պատվիրատուն հանձնարարում է Կատարողին, իսկ վերջինս սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց, սույն պայմանագրում նշված կարգով ու ժամկետներում պարտավորվում է Պատվիրատուի համար կատարել Արագածոտնի մարզի Ոսկեվազ համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձան հանդիսացող Սբ Հովհաննես եկեղեցու (այսուհետ «Հուշարձան») վերականգնման աշխատանքները (այսուհետ՝ «Աշխատանք»)՝ համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի:
2. Աշխատանքը պետք է կատարվի ապահովելով սույն պայմանագրի անբաժանելի մասեր հանդիսացող՝
   - N 1 հավելված՝ «Աշխատանքի տեխնիկական բնութագրի»,
   - N 2 հավելված՝ «Հուշարձանի վերականգնման աշխատանքային նախագծի»,
   - N 3 հավելված՝ «Աշխատանքի կատարման ծավալաթերթի»,
   - N 4 հավելված՝ «Աշխատանքի կատարման նախահաշվի»
   - N 5 հավելված՝ «Աշխատանքի գնման ժամանակացույցի»
   - N 6 հավելված՝ «Վճարման ժամանակացույցի»
   - N 7 հավելված՝ «Աշխատանքի փուլի հանձնման-ընդունման արձանագրության ձևի»
   - N 8 հավելված՝ «Աշխատանքի հանձնման-ընդունման ակտի ձևի»

   պահանջները ինչպես նաև «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին» ՀՀ օրենքի, այլ իրավական ակտերի, Աշխատանքի կատարման կարգն ու ձևը և այլ պարտադիր պահանջները սահմանող կանոնների ու նորմերի դրույթները:
3. Աշխատանքի կատարման դիմաց վճարը իրականացվելու է «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 08 բաժնի N 02 խմբի N 07 դասի 03 ենթախմբի «Հուշարձանների վերանորոգում և վերականգնում» ծրագրով նախատեսված բյուջետային հատկացումների հաշվին՝ ՀՀ Կառավարության 2009 թ. նոյեմբերի 26-ի N 1347-Ն որոշմամբ սահմանված գումարով:

II. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

4. Պատվիրատուն պարտավոր է՝

ա) Կատարողի կողմից սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման պայմանով, սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և լրիվ ծավալով կատարել սույն պայմանագրի III. մասում նշված վճարումները.

բ) Կատարողից ընդունել Կատարողի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված Աշխատանքը և դրանց միջանկյալ փուլերը.

գ) ստորագրել սույն պայմանագրի *19-րդ* կետում նշված արձանագրությունները՝ Կատարողի կողմից Աշխատանքի սույն պայմանագրի N 5 հավելվածում նշված միջանկյալ փուլերը պատշաճ ձևով ու կարգով կատարելու դեպքում.

դ) ստորագրել սույն պայմանագրի *22-րդ* կետում նշված ակտը՝ Կատարողի կողմից Աշխատանքն ամբողջ ծավալով և պատշաճ կատարելու դեպքում.

ե) վերանայել սույն պայմանագրի պայմանները (մասնավորապես միջանկյալ փուլերի և /կամ/ ամբողջ աշխատանքի կատարման ծավալները և /կամ/ դրանց հանձնման ներկայացնելու ժամկետները), եթե Աշխատանքի իրականացման ժամանակ առաջացել է կամ ի հայտ է եկել սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալների ավելացում, կամ դրանց բնույթի փոփոխություն (թանգացում), կամ էլ սույն պայմանագրով չնախատեսված աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն, ինչի հետևանքով Աշխատանքի ամբողջական կատարման համար անհրաժեշտ բոլոր աշխատանքների արժեքը ավելի, քան 3 (երեք) տոկոսի չափով կգերազանցի սույն պայմանագրի *8-րդ* կետում նշված գումարը:

զ) աջակցել Կատարողին հուշարձանների պահպանության և վերականգնման ոլորտի Պատվիրատուի իրավասությանը վերապահված իրավասությունների և դրանց հետ կապված մասնագիտական հարցերի շրջանակներում:

է) սույն պայմանագրի *15-րդ* կետով նախատեսված երաշխիքային ժամկետի ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում Կատարողին ներկայացնել իրատեսական ժամկետում թերությունների վերացման պահանջ:

5. Պատվիրատուն իրավունք ունի՝

ա) ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքը՝ բացառելով անմիջական միջամտություն վերջինիս կանոնադրական գործունեությանը.

բ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել Աշխատանքի կատարման տեխնիկական ու հեղինակային հսկողություն և դրա հետ կապված գործողություններ.

գ) Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին.

դ) Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերացնել Աշխատանքի կամ դրա որևէ մասի կատարման ընթացքում (արդյունքում) տեղ գտած թերությունները, կամ պատվիրատուի ընդունմանը վերստին ներկայացնել անպատշաճ ձևով կամ կարգով ընդունմանը ներկայացված Աշխատանքը կամ դրա փուլերը

ե) չընդունել Կատարողի կողմից ընդունմանը ներկայացված Աշխատանքը կամ դրա միջանկյալ փուլի արդյունքը՝ ՀՀ օրենսդրության կամ իրավական ակտերի, կամ սույն պայմանագրի պահանջներին այն չհամապատասխանելու դեպքում, հետաձգելով՝ սույն պայմանագրի N 6 հավելված՝ «Վճարման ժամանակացույցով» սահմանված վճարման ժամկետը մինչև Աշխատանքը կամ դրա համապատասխան միջանկյալ փուլի արդյունքի ընդունելը.

զ) իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կամ միջանկյալ փուլի թերությունների

անվճար վերացման և այն Պատվիրատուի ընդունմանը վերստին ներկայացման ողջամիտ ժամկետ, կամ նոր ժամկետ՝ Կատարողից պահանջելով վճարել սույն պայմանագրի *12-րդ* կետով սահմանված տուգանքը և տույժը:

է) իր հայեցողությամբ սահմանել սույն պայմանագրով սահմանված ժամկետում ընդունմանը չներկայացված Աշխատանքի կամ միջանկյալ փուլն ընդունմանը ներկայացնելու նոր (ողջամիտ) ժամկետ, Կատարողից պահանջելով վճարել սույն պայմանագրի *12-րդ* կետով սահմանված տուգանքը և տույժը:

ը) սույն պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ կամ իրավական ակտերով սահմանված կարգով միակողմանի կարգով վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը, Կատարողից պահանջելով Պատվիրատուին հանձնել Աշխատանքի փաստացի կատարված մասը (ներառյալ արդեն ընդունվածը, ընդունմանը չներկայացվածը և չընդունվածը) և վճարել սույն պայմանագրի *28-րդ* կետով սահմանված հատուցումը և (կամ) սույն պայմանագրի *12-րդ* կետով սահմանված տուգանքը և տույժը և (կամ) սույն պայմանագրի *27-րդ* կետով սահմանված տուգանքը:

6. Կատարողը պարտավոր է՝

ա) ՀՀ Կառավարության 2009 թ. նոյեմբերի 26-ի N 1347-N որոշման հրապարակման պահից Հուշարձանի տարածքում սկսել սույն պայմանագրի կատարմանն ուղղված աշխատանքները և դրանք ավարտել սույն պայմանագրի N 5 հավելված՝ գնման ժամանակացույցով սահմանված ժամկետում

բ) Աշխատանքի առնվազն 75 (յոթանասունհինգ) տոկոսը կատարել անձամբ՝ սեփական ուժերով, միջոցներով, նյութերով, գործիքներով, մեխանիզմներով, սարքերով ու սարքավորումներով, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում.

գ) կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի և տեխնիկական ու հեղինակային հսկողություններ իրականացնող անձանց կողմից տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին, կամ ՀՀ օրենսդրության և իրավական ակտերի պահանջներին.

դ) Աշխատանքը և դրա միջանկյալ փուլերը Պատվիրատուի ընդունմանը ներկայացնել սույն պայմանագրով սահմանված կարգով և սույն պայմանագրի N 5 հավելված՝ «Աշխատանքի գնման ժամանակացույցով» սահմանված ժամկետներում, այդ մասին Պատվիրատուին տեղեկացնելով սույն պայմանագրում նշված, կամ Պատվիրատուի կողմից սահմանված ընդունման այլ ժամկետներից առնվազն 5 աշխատանքային օր առաջ.

ե) Պատվիրատուին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների, ինչպես նաև Աշխատանքի կատարման ընթացքում ի հայտ եկած Հուշարձանի որևէ անհայտ առանձնահատկության, կամ սույն պայմանագրին հակասող (սույն պայմանագրով չնախատեսված) տեխնիկական իրավիճակի մասին,

զ) Պատվիրատուին անհապաղ հայտնել Հուշարձանի կամ Աշխատանքի կատարման տարածքում հայտնաբերված հնագիտական բնույթի որևէ գտանքի (ճարտարագիտական որևէ կառույցներ, գծեր, կամ դրանց մասեր, Հուշարձանի, կամ որևէ այլ շինության մասեր, կամ բեկորներ, քանդակներ, կամ դրանց մասեր, կենցաղային օգտագործման առարկաներ, կամ դրանց մնացորդներ և այլն) մասին,

է) ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները սույն պայմանագրի կատարման համար առաջացած բոլոր տեսակի խոչընդոտները շուտափույթ վերացնելու համար,

ը) Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պարտավոր է իր հաշվին՝ Պատվիրատուի կողմից սահմանված իրատեսական ժամկետում վերացնել թերությունները:

թ) Կատարողի կողմից երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Պատվիրատուի սահմանած ժամկետում չվերացնելը հանգեցնում է Կատարողի կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանավորված Պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

7. Կատարողն իրավունք ունի՝

ա) Պատվիրատուից պահանջել վճարել սույն պայմանագրով սահմանված տույժերը, վերջինիս կողմից սույն պայմանագրով սահմանված ժամկետների խախտման դեպքում,

բ) սույն պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ կամ իրավական ակտերով սահմանված կարգով միակողմանի կարգով վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը, Պատվիրատուին հանձնելով Աշխատանքի փաստացի կատարված (ներառյալ արդեն ընդունված, ընդունմանը չներկայացված և չընդունված) մասը, և պահանջելով վճարել սույն պայմանագրի *28-րդ* կետով սահմանված հատուցումը և (կամ) սույն պայմանագրի *11-րդ* կետով սահմանված տույժերը և (կամ) սույն պայմանագրի *27-րդ* կետով սահմանված տուգանքը:

III. Փոխհաշվարկների կարգը

8. Կողմերի փոխհամաձայնությամբ, սույն պայմանագրի գինը՝ Աշխատանքի կատարման ընդհանուր արժեքը կազմում է 9763000,0 (ինը միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար) դրամ:

9. Աշխատանքի միջանկյալ փուլերի արժեքները ու դրանց վճարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի N 6 հավելված՝ «Վճարման ժամանակացույցով» և Կատարողին վճարվելու են սույն պայմանագրում նշված բանկային հաշվին փոխանցումներ կատարելու եղանակով՝ փուլերի հանձնման-ընդունման արձանագրությունները և Աշխատանքի հանձնման-ընդունման ակտը երկկողմ ստորագրելու պահից ոչ ուշ, քան 10 (տաս) բանկային օրվա ընթացքում:

10. Սույն պայմանագրի *8-րդ* կետում նշված գումարն իր մեջ է ներառում ավելացված արժեքի հարկի գումարը, ինչպես նաև սույն պայմանագրի կատարման հետևանքով Կատարողի կողմից վճարման ենթակա բոլոր տեսակի այլ հարկերի ու պարտադիր վճարների գումարները, որոնք Կատարողը, հանդիսանալով հարկային գործակալ, պարտավոր է ինքնուրույն հաշվարկել ու վճարել ՀՀ պետական բյուջե, ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամ և այլն:

11. Պատվիրատուի կողմից վճարումների սույն պայմանագրով սահմանված ժամկետներն ուշացնելու դեպքում նա Կատարողին է վճարելու նաև տույժ՝ վճարման ենթակա, բայց չվճարված գումարի 0,05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, վճարման ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար:

12. Կատարողի կողմից Պատվիրատուի ընդունմանը ներկայացված Աշխատանքը (կամ դրա որևէ փուլերը) սույն պայմանագրի N 5 հավելված՝ «Աշխատանքի գնման ժամանակացույցով» սահմանված ժամկետներից ուշ ներկայացնելու կամ դրանք Պատվիրատուի կողմից չընդունելու դեպքում, Կատարողը Պատվիրատուին վճարելու է տուգանք սույն պայմանագրի գնի 0,05 %-ի չափով և տույժ՝ Աշխատանքի (կամ տվյալ փուլերի) ամբողջ գումարի 0,05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ Աշխա-

տանքի (կամ այդ փուլերի) ընդունման ժամկետանց յուրաքանչյուր օրացուցային օրվա համար: Կատարողի կողմից վճարման ենթակա սույն պայմանագրով նախատեսված տույժերն ու տուգանքը հաշվարկվում և առաջնահերթության կարգով հաշվանցվում են Պատվիրատուի կողմից Կատարողին փոխանցվող հերթական վճարների գումարների մեջ, իսկ դրանց անբավարարության դեպքում՝ ձևակերպվում են որպես բռնագանձման պահանջ:

13. Տույժերի և տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

15. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների արդյունքի համար նախատեսվում է երաշխիքային ժամկետ, որը սահմանվում է աշխատանքները ողջ ծավալով ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը:

16. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխատուցել Պատվիրատուի կրած վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

17. Յուրաքանչյուր եռամսյակում փաստացի ստանձնվելիք պարտավորությունների չափերը չեն կարող գերազանցել ***N 5*** և ***N 6*** հավելվածներով նախատեսված գնման և վճարման ժամանակացույցով՝ տվյալ եռամսյակում նախատեսված գումարները: Յուրաքանչյուր եռամսյակում նախատեսված գումարների չափով պարտավորությունները ստանցվում են, եթե 2009 թ. պետական բյուջեում չեն կատարվել փոփոխություններ: Փոփոխություններ կատարվելու դեպքում տվյալ եռամսյակում պարտավորությունները /փաստացի առաջացող/ ստանցվում են փոփոխված գումարների չափով /պատվիրատուն իրավասու է միակողմանի պակասեցնել կամ ավելացնել գումարները/:

IV. Պայմանագրի ժամկետը

18. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու Կողմերի ստորագրության պահից և գործում է մինչև երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

V. Աշխատանքների ընդունման կարգը

19. Աշխատանքի փուլերը Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 5 հավելված՝ «Աշխատանքի գնման ժամանակացույցով» սահմանված ժամկետներում՝ Պատվիրատուին դրանից ոչ պակաս, քան 5 աշխատանքային օր առաջ ուղարկելով Աշխատանքի փուլի հանձնման-ընդունման արձանագրության լրացված, ստորագրված ու կնքված հինգ օրինակներ, որոնց ձևը բերված է սույն պայմանագրի N 7 հավելվածում: Նշված արձանագրությունները պետք է ստորագրված լինեն նաև հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող անձանց կողմից: Ընդունմանը ներկայացվող աշխատանքները համատեղ զննվում են Պատվիրատուի և Կատարողի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում և դրանք ընդունելու դեպքում Պատվիրատուի ներակացուցիչը զննության ավարտի պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում է Կատարողից ստացված արձանագրությունները, որոնց մեկ օրինակը հանձնում է Կատարողի ներկայացուցչին:

20. Պատվիրատուի ընդունմանը առաջին անգամ ներկայացված Աշխատանքի որևէ փուլը վերջինիս կողմից չընդունելու դեպքում, նա զննության ավարտի պահից տաս աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում Աշխատանքի այդ փուլն չընդունելու հիմնավորված գրավոր մերժում, նշելով թերությունները և՝

ա) կամ դրանք վերացնելու ու փուլն ընդունմանը վերստին ներկայացնելու ժամկետը,

բ) կամ սույն պայմանագիրը միակողմանի կարգով վաղաժամկետ լուծելու մասին իր որոշումը՝ եթե առկա են սույն պայմանագրի *28-րդ* կետում նշված հիմքերը:

21. Պատվիրատուի ընդունմանը երկրորդ անգամ ներկայացված Աշխատանքի փուլը վերջինիս կողմից չընդունելու դեպքում, նա զննության ավարտի պահից տաս աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում Աշխատանքի փուլն ընդունելու հիմնավորված գրավոր մերժում, նշելով թերությունները և՝

ա) կամ դրանք վերացնելու ու փուլն ընդունմանը վերստին ներկայացնելու նոր ժամկետ,

բ) կամ սույն պայմանագիրը միակողմանի կարգով վաղաժամկետ լուծելու մասին իր որոշումը:

22. Աշխատանքն ամբողջությամբ Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 5 հավելված՝ «Աշխատանքի գնման ժամանակացույցով» սահմանված վերջին ժամկետում՝ Պատվիրատուին ուղարկելով Աշխատանքն հանձնման-ընդունման ակտի լրացված, ստորագրված ու կնքված հինգ օրինակներ, որոնց ձևը բերված է սույն պայմանագրի N 8 հավելվածում: Նշված ակտերը պետք է ստորագրված լինեն նաև հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող անձանց կողմից: Ընդունմանը ներկայացվող Աշխատանքը համատեղ զննվում են Պատվիրատուի և Կատարողի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում և այն ընդունելու դեպքում Պատվիրատուի ներկայացուցիչը զննության ավարտի պահից հինգ աշխատանքային օրվա

ընթացքում ստորագրում է Կատարողի կողմից ուղարկված ակտերը, որոնց մեկ օրինակը հանձնում է Կատարողի ներկայացուցչին:

23. Պատվիրատուի ընդունմանը առաջին անգամ ներկայացված Աշխատանքն ամբողջությամբ վերջինիս կողմից չընդունելու դեպքում, նա գնության ավարտի պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում Աշխատանքն ամբողջությամբ չընդունելու հիմնավորված գրավոր մերժում, նշելով թերությունները և՝

ա) կամ դրանք վերացնելու ու Աշխատանքն անբողջությամբ ընդունմանը վերստին ներկայացնելու ժամկետ,

բ) կամ սույն պայմանագիրը միակողմանի կարգով վաղաժամկետ լուծելու մասին իր որոշումը՝ եթե առկա են սույն պայմանագրի *25-րդ* կետում նշված հիմքերը:

24. Պատվիրատուի ընդունմանը երկրորդ անգամ ներկայացված Աշխատանքն ամբողջությամբ վերջինիս կողմից չընդունելու դեպքում, նա գնության ավարտի պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում Աշխատանքն ամբողջությամբ չընդունելու հիմնավորված գրավոր մերժում, նշելով թերությունները և

ա) կամ դրանք վերացնելու ու Աշխատանքն անբողջությամբ ընդունմանը վերստին ներկայացնելու նոր ժամկետը,

բ) կամ սույն պայմանագիրը միակողմանի կարգով վաղաժամկետ լուծելու մասին իր որոշումը:

VI. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

25. Բացի սույն պայմանագրով սահմանված այլ դեպքերից, սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Պատվիրատուի նախաձեռնությամբ նաև եթե՝

ա) սույն պայմանագրով նախատեսված հիմքերով Պատվիրատուն երկու անգամ մերժել է Աշխատանքի կամ դրա միջանկյալ որևէ փուլերի ընդունումը,

բ) Պատվիրատուի ընդունմանը ներկայացված Աշխատանքը կամ դրա որևէ փուլը կատարված է սույն պայմանագրի պահանջների բազմաթիվ կամ կոպիտ (էական) եզակի խախտմամբ,

գ) Կատարողը ավելի քան 10 աշխատանքային օրով ուշացրել է սույն պայմանագրի *6-րդ* կետի ա) ենթակետում նշված պահանջների կատարումը,

դ) Կատարողը սույն պայմանագիրը կնքելու համար ներկայացրել է ակնհայտ ոչ հավաստի կամ կեղծ տեղեկություններ (տեղեկատվություն),

ե) Կատարողը չի կատարել Պատվիրատուի ներկայացուցչի, կամ տեխնիկական, կամ հեղինակային հսկողություն իրականացնող անձի օրինական որևէ ցուցում,

զ) ստուգման արդյունքում պարզվել է, որ Աշխատանքի կատարման ընթացքում Կատարողը թույլ է տվել սույն պայմանագրի պահանջների բազմաթիվ կամ կոպիտ (էական) եզակի խախտում:

26. Բացի սույն պայմանագրով սահմանված այլ դեպքերից, սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կատարողի նախաձեռնությամբ նաև եթե՝

ա) Պատվիրատուն երկու անգամ ակնհայտորեն անհիմն մերժել է Աշխատանքի փուլերի ընդունումը, սահմանելով դրանք ընդունմանը վերստին ներկայացնելու ժամկետներ,

բ) Պատվիրատուն ավելի քան 10 բանկային օրով խախտել է սույն պայմանագրով սահմանված վճարումների կատարման որևէ ժամկետ,

գ) Պատվիրատուի մեղքով ավելի քան 10 աշխատանքային օրով ուշացվել է Աշխատանքի կամ դրա միջանկյալ որևէ փուլի ընդունման համար, կամ դրանք չընդունելու մասին Կատարողին տեղեկացնելու մասին սույն պայմանագրով սահմանված որևէ ժամկետ:

27. Սույն պայմանագրով սահմանված հիմքերով դրա վաղաժամկետ լուծման պահանջ ներկայացնող (որոշում կայացրած) Կողն իրավունք ունի նաև մյուս Կողմից պահանջել սույն պայմանագրի *28-րդ* կետում նշված հատուցումները և (կամ) տուգանքի վճարում որի չափն է՝

- Կատարողի կողմից Աշխատանքի փաստացի չկատարված մասի արժեքի 15 (տասնհինգ) տոկոսը, եթե տուգանքը պարտավոր է վճարել Պատվիրատուն.
- Պատվիրատուի կողմից Աշխատանքի չընդունված (ներառյալ չկատարված) մասի արժեքի 15 (տասնհինգ) տոկոսը, եթե տուգանքը պարտավոր է վճարել Կատարողը:

VI. Այլ պայմաններ

28. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք անպատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու, կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով, կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչնդոտներ ստեղծելու, մյուս Կողմին վնաս պատճառելու կամ հավանական եկամուտներից զրկելու համար Կողմերից յուրաքանչյուրը կրում է նյութական և ֆինանսական պատասխանատվություն՝ պատճառված վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով:

29. Սույն պայմանագրի *28-րդ* կետով նախատեսված դեպքերում հարգելի պատճառ (մեղքի բա-ցակայություն) է համարվում անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքը, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսիք են համարվում՝ տարերային աղետների, արդյունաբերական և այլ վթարների, զանգվածային հասարակական անկարգությունների, պատերազմի կամ այլ նման պարագաների հետևանքներն ու դրանց վերացնելու դեպքերը, կամ ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ընդունված և ուժի մեջ մտած ակտերը, եթե դրանք անմիջական կապված են սույն պայմանագրով նախատեսված Կողմերի պարտավորությունների կատարման պատշաճության, ժամկետների կամ ծավալների հետ:

Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է անընդմեջ 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի սույն պայմանագրով սահմանված կարգով լուծել սույն պայմանագիրը այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս Կողմին՝ այդ հիմքով որևէ տույժ, տուգանք, կամ հատուցում չհաշվարկելով ու դրանց վճարման պահանջ չներկայացնելով:

30. Սույն պայմանագրից ծագած՝ Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

31. Սույն պայմանագրով արգելվում է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք համգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխմանը:

32. Սույն պայմանագիրի կատարումից միակողմանի հրաժարվելը կամ վաղաժամկետ լուծելը, Կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը անանպատակահարմար լինելու դեպքում, կամ այլ պատճառառանությամբ, չի թույլատրվում: Այդպիսի պարագայում մյուս Կողմն իրավունք ունի՝ կամ ստանալ սույն պայմանագրի *28-րդ* կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարում երկու դեպքում էլ կիրառելով սույն պայմանագրով սահմանված տույժերն ու տուգանքները:

33. Սույն պայմանագիրը կնքելուց Կողմերը հաստատում են, որ դրանով իրենց շահերը և օրինական իրավունքները ոչ մի կերպ չեն խախտվում, կամ սահմանափակվում:

34. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը և Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

35. Սույն պայմանագրի կատարման հետ կապված բոլոր տեսակի փաստաթղթերը, ծանուցումները, տեղեկատվությունը և հաղորդագրությունները Կողմերին պետք է հանձնվեն առ ձեռն, կամ ուղարկվեն պատվիրված նամակներով՝ փոստային հետ ծանուցումով, սույն պայմանագրում նշված հասցեներով: Ծանուցումների, նամակների և այլ փաստաթղթերի ներկայացման (ուղարկման, հանձնման) սույն պայմանագրով սահմանված ժամկետներ են համարվում հասցեատիրոջ կողմից դրանք փաստացի ստանալու (առ ձեռն հանձնելու) պահը, իսկ հասցեատիրոջ բացակայության, կամ նրանից կախված որևէ այլ պատճառով փոստային ծառայության կողմից դրանք հետ վերադարձնելու դեպքում՝ նամակը (առաքանին) վերադարձնելու մասին կապի բաժանմունքի կողմից կատարված նշման օրը:

36. Տեղեկություններ Կողմերի մասին՝

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, հասցեն՝ 0010, քաղաք Երևան, Կառավարական շենք N 3, հաշիվ N 900011013753 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում, հեռ.՝ 52-93-49:

Կատարող՝ «Սիվա» փակ բաժնետիրական ընկերություն, հասցեն՝ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Սպանդարյանի փ. 29/28, ՀՎՀՀ՝ 05001153, հաշվարկային հաշիվ N 247070001760 «Արդշինինվեստբանկի» Աշտարակի մասնաճյուղում, հեռ. 023235720:

37. Սույն պայմանագիրը կազմված է հինգ հավասարազոր օրինակներից (յուրաքանչյուրը բաղկացած է ինը թերթից և յոթ թերթ հավելվածներից), որոնցից երկու օրինակները հանձնվում են Կատարողին, իսկ երեք օրինակները՝ Պատվիրատուին:

Պատվիրատու

Ա. Հայրապետյան

կ.տ.

Կատարող

Ս. Սարգսյան

կ.տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N3
«ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ»
ԾՐԱԳՐՈՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ
N ՀՀ ՄՇ ԱՇՁԲ53/ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի
իրավաբանական և վերահսկողության
վարչության պետ

Ա. Հայրապետյան

«02» ՀՕ 2009թ.

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղի Սբ Հովհաննես եկեղեցու մասնակի
վերականգնման և ամրակայման աշխատանքների

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չ/Մ	Քանակ
II Վերականգնման աշխատանքներ			
13.	Կամարների միակոր քարերի նոր տաշ ու շար	քմ	16,00
14.	Թաղերի միակոր քարերի նոր տաշ ու շար սրբատաշ	քմ	16,00
18.	Ուղղաձիգ բարդ պրոֆիլավոր քիվերի նոր տաշ ու շար	քմ	20,85
49.	Լիցքի իրականացում խամքարով և կրաշաղախով	խմ	4,32

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Դ. Առուշանյան

«Արագածոտն» ՊՓԲԸ տնօրեն՝ Լ. Ղուկասյան

«Սիվա» ՓԲԸ տնօրեն Ս.Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 4
«ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ»
ԾՐԱԳՐԻՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ
N ՀՀ ՄՆ ԱԵՅԲ 53/ԻԱՑՄՍՆԱԳՐԻ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի իրավաբանական և վերահսկողության վարչության պետ

Ա. Հայրապետյան

«02» 10 2009թ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղի Սբ Հովհաննես եկեղեցու մասնակի վերականգնման և ամրակայման աշխատանքների

հազ.դրամ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չ/Մ	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
	II Վերականգնման աշխատանքներ				
13.	Կամարների միակոր քարերի նոր տաշ ու շար	քմ	16,00	130,00	2080,0
14.	Թաղերի միակոր քարերի նոր տաշ ու շար սրբատաշ	քմ	16,00	130,00	2080,0
18.	Ուղղաձիգ բարդ պրոֆիլավոր քիվերի նոր տաշ ու շար	քմ	20,85	140,00	2919,0
49.	Լիցքի իրականացում խամքարով և կրաշաղախով	խմ	4,32	58,00	250,6
	Ընդամենը				
	Շահույթ՝ 11%				7329,6
	Ընդամենը՝				806,3
	ԱԱՀ 20 %				8135,8
	Ընդամենը՝				1627,2
					9763,0

«Միվա» ՓԲԸ-ի տնօրեն՝

Ս. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 5
«ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ»
ԾՐԱԳՐՈՎ ՍԵԿ ԱՆՁԻՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ
N ՀՀ ՄՇԱՄ ՍՀՁԲ 53/1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի իրավաբանական և վերահսկողության վարչության պետ

Ս. Հայրապետյան

«02» 12 2009 թ.

Աշխատանքի գնման ժամանակացույց

Հ/հ	Ձեռք բերվող աշխատանքի անվանումը	Աշխատանքի փուլերի կատարման (ընդունմանը ներկայացման) ժամկետները և գումարները հազ. դրամ		Ընդամենը հազ. դրամ
		2009 թ դեկտեմբերի 10-ին	2009 թ. դեկտեմբերի 30-ին	
1	Արագածոտնի մարզի Ոսկեազ համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձան հանդիսացող Սբ. Հովհաննես եկեղեցու վերականգնման, աշխատանքները	-	9763,0	9763,0
	Ընդամենը	-	9763,0	9763,0

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Դ. Առուշանյան

«Սիվա» ՓԲԸ-ի տնօրեն՝ /Ս. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 6
«ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ»
ԾՐԱԳՐՈՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ
N ՀՀ ՄՇ ԱՇՁԲ 53/ՊՈՅԱՄԱՆԱԳՐԻ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի
իրավաբանական և վերահսկողության վարչության
պետ

Ա. Հայրապետյան

«02» 12 2009 թ.

Վճարման ժամանակացույց

ՀՀ մշակույթի նախարարության

«Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N ___ հավելվածի N 08 բաժնի N 02 խմբի N 07 դասի «03 Հուշարձանների վերանորոգում և վերականգնում» ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին:

Ծրագիրն իրականացնողը՝ ՀՀ մշակույթի նախարարություն

հ/հ	Ձեռք բերվող աշխատանքի անվանումը	Գնումն իրականավելու նպատակով նախատեսվում է վճարել /հազար դրամ/		Ընդամենը հազ. դրամ
		2009 թ. 3-րդ եռամսյակ	2009 թ. 4-րդ եռամսյակ	
1	Արագածոտնի մարզի Ոսկեհազ համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձան հանդիսացող Սբ. Հովհաննես եկեղեցու վերականգնման, աշխատանքները	—	9763,0	9763,0
	Ընդամենը	—	9763,0	9763,0

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Առուշանյան

«Սիվա» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս. Սարգսյան

Հավելված N 7
«__» «_____» 2009թ.
N ՀՀ ՄՆ ԱՇՀԲ 55/պայմանագրի

Պատվիրատու

_____
_____
_____
հասցեն՝ _____
հհ_____
հվհհ_____

Կապալառու

_____
_____
հասցեն՝ _____
հհ_____
հվհհ_____
_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՒԼԻ ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» «_____» 2009թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» «_____» 2009թ.

Պայմանագրի հայտարը՝ _____

Գնորդն, ի դեմս _____ և Կապալառուն՝ ի դեմս _____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 2009թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի /պատասխանատու ստորաբաժանման/ N____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները /այսուհետև՝ աշխատանքներ/ համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն «__» «_____» 2009թ.-ից «__» «_____» 2009թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
1	2	3	4	5
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
/Ստորագրություն/

ազգանուն_____
Կ.Տ

Աշխատանքն ընդունեց

_____
/Ստորագրություն/

ազգանուն_____
Կ.Տ.

Հավելված N 8
«__» «_____» 2009թ.
N ՀՀ ՄՆ ԱՇՀԲ 53/պայմանագրի

Պատվիրատու

_____
_____
_____
հասցեն՝ _____
հհ_____
հվհհ_____

Կապալառու

_____
_____
հասցեն՝ _____
հհ_____
հվհհ_____
_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» «_____» 2009թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» «_____» 2009թ.

Պայմանագրի համարը՝ _____

Գնորդն, ի դեմս _____ և Կապալառուն՝ ի դեմս _____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 2009թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի /պատասխանատու ստորաբաժանման/ N____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները /այսուհետև՝ աշխատանքներ/ համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն «__» «_____» 2009թ.-ից «__» «_____» 2009թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
1	2	3	4	5
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
/Ստորագրություն/

ազգանուն_____
Կ.Տ

Աշխատանքն ընդունեց

_____
/Ստորագրություն/

ազգանուն_____
Կ.Տ.

ՀՀ մշակույթի նախարարությունը
տիկին Հ. Պողոսյան

Հարգելի տիկին Պողոսյան

Ի պատասխան Ձեր 2009 թվականի դեկտեմբերի 1-ի 02/3766 գրության՝ սույնով հավաստում ենք, որ «Սիվա» ՓԲԸ-ն՝

- ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
- դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գույքը արգելանքի տակ չի գտնվում.
- կամ դրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝

ա/ դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար.

բ/ գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ.

գ/ իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Սիվա» ՓԲԸ-ն հայտնում է իր համաձայնությունը Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության հետ կնքել Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձան հանդիսացող «Սբ Հովհաննես եկեղեցու» աշխատանքների կատարման պայմանագիրը՝ ըստ կից տեխնիկական բնութագրի 9763.0 հազար դրամ գումարով (ներառյալ ԱԱՀ) վճարելու պայմանով:

«Սիվա» ՓԲԸ-ի
Տնօրեն Ս. Մարգսյան

ՀՀ մշակույթի նախարարություն
Աշխատակազմի քարտուղարություն
Մուտք թիվ

02/3766
01.12.09թ.

«Սիվա» ՓԲԸ տնօրեն
պրն Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

ՀՀ մշակույթի նախարարությունը առաջարկում է Ձեզ կատարել Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղում գտնվող, պատմության և մշակույթի հուշարձան հանդիսացող «Սբ Հովհաննես եկեղեցու» վերականգնման աշխատանքները՝ ըստ կից տեխնիկական բնութագրի և ծավալաթերթի:

Գնումները ֆինանսավորվելու են 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին, և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Գնումներին մասնակցելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ «Սիվա» ՓԲԸ-ն՝

- ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
- դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գույքը արգելանքի տակ չի գտնվում.
- կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում չպետք է՝

ա/ դատապարտված լինի տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

բ/ գնման պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած լինի կեղծ տվյալներ,

գ/ իր գործողությամբ կամ անգործությամբ խախտած լինի գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը և գնային առաջարկը:

Կից ներկայացնում ենք հիշյալ աշխատանքների կատարման գնման պայմանագրի նախագիծը:

Առդիր՝ թերթ:

Հարգանքով՝ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Կատ.՝ Դ. Առուշանյան
Հեռ.՝ 585851

«ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ԾՐԱԳՐՈՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՄՆ ԱԵՅԲ 35/1

Երկուսը դեկտեմբերի երկու հազար ինը թվականի, քաղաք Երևան:

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս նախարարի 23.01.2009 թ. N 14-Ա հրամանի հիման վրա գործող նախարարության աշխատակազմի իրավաբանական և վերահսկողության վարչության պետ՝ Ա. Հայրապետյանի մի կողմից և «Կոտայքնախագիծ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Կատարող»), ի դեմս ընկերության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ Տ. Ղազարյանի մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր») կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

I. Պայմանագրի առարկան

1. Պատվիրատուն հանձնարարում է Կատարողին, իսկ վերջինս սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց, սույն պայմանագրում նշված կարգով ու ժամկետներում պարտավորվում է Պատվիրատուի համար կատարել Կոտայքի մարզի Բջնի համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձան հանդիսացող «Բջնո ամրոցի» (այսուհետ «Հուշարձան») վերականգնման աշխատանքները (այսուհետ՝ «Աշխատանք»)՝ համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի:
2. Աշխատանքը պետք է կատարվի ապահովելով սույն պայմանագրի անբաժանելի մասերը հանդիսացող՝
   - N 1 հավելված՝ «Աշխատանքի տեխնիկական բնութագրի»,
   - N 2 հավելված՝ «Հուշարձանի վերականգնման աշխատանքային նախագծի»,
   - N 3 հավելված՝ «Աշխատանքի կատարման ծավալաթերթի»,
   - N 4 հավելված՝ «Աշխատանքի կատարման նախահաշվի»
   - N 5 հավելված՝ «Աշխատանքի գնման ժամանակացույցի»
   - N 6 հավելված՝ «Վճարման ժամանակացույցի»
   - N 7 հավելված՝ «Աշխատանքի փուլի հանձնման-ընդունման արձանագրության ձևի»
   - N 8 հավելված՝ «Աշխատանքի հանձնման-ընդունման ակտի ձևի»

   պահանջները ինչպես նաև «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին» ՀՀ օրենքի, այլ իրավական ակտերի, Աշխատանքի կատարման կարգն ու ձևը և այլ պարտադիր պահանջները սահմանող կանոնների ու նորմերի դրույթները:
3. Աշխատանքի կատարման դիմաց վճարը իրականացվելու է «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 08 բաժնի N 02 խմբի N 07 դասի 03 ենթախմբի «Հուշարձանների վերանորոգում և վերականգնում» ծրագրով նախատեսված բյուջետային հատկացումների հաշվին՝ ՀՀ Կառավարության 2009 թ. նոյեմբերի 26-ի N 1347-Ն որոշմամբ սահմանված գումարով:

II. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

4. Պատվիրատուն պարտավոր է՝

ա) Կատարողի կողմից սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման պայմանով, սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և լրիվ ծավալով կատարել սույն պայմանագրի III. մասում նշված վճարումները.

բ) Կատարողից ընդունել Կատարողի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված Աշխատանքը և դրանց միջանկյալ փուլերը.

գ) ստորագրել սույն պայմանագրի *19-րդ* կետում նշված արձանագրությունները՝ Կատարողի կողմից Աշխատանքի սույն պայմանագրի N 5 հավելվածում նշված միջանկյալ փուլերը պատշաճ ձևով ու կարգով կատարելու դեպքում.

դ) ստորագրել սույն պայմանագրի *22-րդ* կետում նշված ակտը՝ Կատարողի կողմից Աշխատանքն ամբողջ ծավալով և պատշաճ կատարելու դեպքում.

ե) վերանայել սույն պայմանագրի պայմանները (մասնավորապես միջանկյալ փուլերի և /կամ/ ամբողջ աշխատանքի կատարման ծավալները և /կամ/ դրանց հանձնման ներկայացնելու ժամկետները), եթե Աշխատանքի իրականացման ժամանակ առաջացել է կամ ի հայտ է եկել սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալների ավելացում, կամ դրանց բնույթի փոփոխություն (թանգացում), կամ էլ սույն պայմանագրով չնախատեսված աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն, ինչի հետևանքով Աշխատանքի ամբողջական կատարման համար անհրաժեշտ բոլոր աշխատանքների արժեքը ավելի, քան 3 (երեք) տոկոսի չափով կգերազանցի սույն պայմանագրի *8-րդ* կետում նշված գումարը:

զ) աջակցել Կատարողին հուշարձանների պահպանության և վերականգնման ոլորտի Պատվիրատուի իրավասությանը վերապահված իրավասությունների և դրանց հետ կապված մասնագիտական հարցերի շրջանակներում:

է) սույն պայմանագրի *15-րդ* կետով նախատեսված երաշխիքային ժամկետի ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում Կատարողին ներկայացնել իրատեսական ժամկետում թերությունների վերացման պահանջ:

5. Պատվիրատուն իրավունք ունի՝

ա) ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքը՝ բացառելով անձնական միջամտություն վերջինիս կանոնադրական գործունեությանը.

բ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել Աշխատանքի կատարման տեխնիկական ու հեղինակային հսկողություն և դրա հետ կապված գործողություններ.

գ) Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին.

դ) Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերացնել Աշխատանքի կամ դրա որևէ մասի կատարման ընթացքում (արդյունքում) տեղ գտած թերությունները, կամ պատվիրատուի ընդունմանը վերստին ներկայացնել անպատշաճ ձևով կամ կարգով ընդունմանը ներկայացված Աշխատանքը կամ դրա փուլերը

ե) չընդունել Կատարողի կողմից ընդունմանը ներկայացված Աշխատանքը կամ դրա միջանկյալ փուլի արդյունքը՝ ՀՀ օրենսդրության կամ իրավական ակտերի, կամ սույն

պայմանագրի պահանջներին այն չհամապատասխանելու դեպքում, հետածգելով սույն պայմանագրի N 6 հավելված՝ «Վճարման ժամանակացույցով» սահմանված վճարման ժամկետը մինչև Աշխատանքը կամ դրա համապատասխան միջանկյալ փուլի արդյունքի ընդունելը.

զ) իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կամ միջանկյալ փուլի թերությունների անվճար վերացման և այն Պատվիրատուի ընդունմանը վերստին ներկայացման ողջամիտ ժամկետ, կամ նոր ժամկետ՝ Կատարողից պահանջելով վճարել սույն պայմանագրի *12-րդ* կետով սահմանված տուգանքը և տույժը:

է) իր հայեցողությամբ սահմանել սույն պայմանագրով սահմանված ժամկետում ընդունմանը չներկայացված Աշխատանքի կամ միջանկյալ փուլն ընդունմանը ներկայացնելու նոր (ողջամիտ) ժամկետ, Կատարողից պահանջելով վճարել սույն պայմանագրի *12-րդ* կետով սահմանված տուգանքը և տույժը:

ը) սույն պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ կամ իրավական ակտերով սահմանված կարգով միակողմանի կարգով վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը, Կատարողից պահանջելով Պատվիրատուին հանձնել Աշխատանքի փաստացի կատարված մասը (ներառյալ արդեն ընդունվածը, ընդունմանը չներկայացվածը և չընդունվածը) և վճարել սույն պայմանագրի *28-րդ* կետով սահմանված հատուցումը և (կամ) սույն պայմանագրի *12-րդ* կետով սահմանված տուգանքը և տույժը և (կամ) սույն պայմանագրի *27-րդ* կետով սահմանված տուգանքը:

6. Կատարողը պարտավոր է՝

ա) ՀՀ Կառավարության 2009 թ. նոյեմբերի 26-ի N 1347-Ն որոշման հրապարակման պահից Հուշարձանի տարածքում սկսել սույն պայմանագրի կատարմանն ուղղված աշխատանքները և դրանք ավարտել սույն պայմանագրի N 5 հավելված՝ գնման ժամանակացույցով սահմանված ժամկետում:

բ) Աշխատանքի առնվազն 75 (յոթանասունհինգ) տոկոսը կատարել անձամբ՝ սեփական ուժերով, միջոցներով, նյութերով, գործիքներով, մեխանիզմներով, սարքերով ու սարքավորումներով, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում.

գ) Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի և տեխնիկական ու հեղինակային հսկողություններ իրականացնող անձանց կողմից տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին, կամ ՀՀ օրենսդրության և իրավական ակտերի պահանջներին.

դ) Աշխատանքը և դրա միջանկյալ փուլերը Պատվիրատուի ընդունմանը ներկայացնել սույն պայմանագրով սահմանված կարգով և սույն պայմանագրի N 5 հավելված՝ «Աշխատանքի գնման ժամանակացույցով» սահմանված ժամկետներում, այդ մասին Պատվիրատուին տեղեկացնելով սույն պայմանագրում նշված, կամ Պատվիրատուի կողմից սահմանված ընդունման այլ ժամկետներից առնվազն 5 աշխատանքային օր առաջ.

ե) Պատվիրատուին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների, ինչպես նաև Աշխատանքի կատարման ընթացքում ի հայտ եկած Հուշարձանի որևէ անհայտ առանձնահատկության, կամ սույն պայմանագրին հակասող (սույն պայմանագրով չնախատեսված) տեխնիկական իրավիճակի մասին,

զ) Պատվիրատուին անհապաղ հայտնել Հուշարձանի կամ Աշխատանքի կատարման տարածքում հայտնաբերված հնագիտական բնույթի որևէ գտանքի (ճարտարագի-

տական որևէ կառույցներ, գծեր, կամ դրանց մասեր, Հուշարձանի, կամ որևէ այլ շինության մասեր, կամ բեկորներ, քանդակներ, կամ դրանց մասեր, կենցաղային օգտագործման առարկաներ, կամ դրանց մնացորդներ և այլն) մասին,

է) ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները սույն պայմանագրի կատարման համար առաջացած բոլոր տեսակի խոչընդոտները շուտափույթ վերացնելու համար,

ը) եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պարտավոր է իր հաշվին՝ Պատվիրատուի կողմից սահմանված իրատեսական ժամկետում վերացնել թերությունները:

թ) Կատարողի կողմից երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Պատվիրատուի սահմանած ժամկետում չվերացնելը հանգեցնում է Կատարողի կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանավորված Պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

7. Կատարողն իրավունք ունի՝

ա) Պատվիրատուից պահանջել վճարել սույն պայմանագրով սահմանված տույժերը, վերջինիս կողմից սույն պայմանագրով սահմանված ժամկետների խախտման դեպքում,

բ) սույն պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ կամ իրավական ակտերով սահմանված կարգով միակողմանի կարգով վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը, Պատվիրատուին հանձնելով Աշխատանքի փաստացի կատարված (ներառյալ արդեն ընդունված, ընդունմանը չներկայացված և չընդունված) մասը, և պահանջելով վճարել սույն պայմանագրի *28-րդ* կետով սահմանված հատուցումը և (կամ) սույն պայմանագրի *11-րդ* կետով սահմանված տույժերը և (կամ) սույն պայմանագրի *27-րդ* կետով սահմանված տուգանքը:

III. Փոխհաշվարկների կարգը

8. Կողմերի փոխհամաձայնությամբ, սույն պայմանագրի գինը՝ Աշխատանքի կատարման ընդհանուր արժեքը կազմում է 11115000,0 (տասնմեկ միլիոն հարյուր տասնհինգ հազար) դրամ:

9. Աշխատանքի միջանկյալ փուլերի արժեքները ու դրանց վճարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի N 6 հավելված՝ «Վճարման ժամանակացույցով» և Կատարողին վճարվելու են սույն պայմանագրում նշված բանկային հաշվին փոխանցումներ կատարելու եղանակով՝ փուլերի հանձնման-ընդունման արձանագրությունները և Աշխատանքի հանձնման-ընդունման ակտը երկկողմ ստորագրելու պահից ոչ ուշ, քան 10 (տաս) բանկային օրվա ընթացքում:

10. Սույն պայմանագրի *8-րդ* կետում նշված գումարն իր մեջ է ներառում ավելացված արժեքի հարկի գումարը, ինչպես նաև սույն պայմանագրի կատարման հետևանքով Կատարողի կողմից վճարման ենթակա բոլոր տեսակի այլ հարկերի ու պարտադիր վճարների գումարները, որոնք Կատարողը, հանդիսանալով հարկային գործակալ, պարտավոր է ինքնուրույն հաշվարկել ու վճարել ՀՀ պետական բյուջե, ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամ և այլն:

11. Պատվիրատուի կողմից վճարումների սույն պայմանագրով սահմանված ժամկետներն ուշացնելու դեպքում նա Կատարողին է վճարելու նաև տույժ՝ վճարման ենթակա, բայց չվճարված գումարի 0,05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, վճարման ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար:

12. Կատարողի կողմից Պատվիրատուի ընդունմանը ներկայացված Աշխատանքը (կամ դրա որևէ փուլերը) սույն պայմանագրի N 5 հավելված՝ «Աշխատանքի գնման ժամանակացույցով» սահմանված ժամկետներից ուշ ներկայացնելու կամ դրանք Պատվիրատուի կողմից չընդունելու դեպքում, Կատարողը Պատվիրատուին վճարելու է տուգանք սույն պայմանագրի 0,05 %-ի չափով և տույժ՝ Աշխատանքի (կամ տվյալ փուլերի) ամբողջ գումարի 0,05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ Աշխատանքի (կամ այդ փուլերի) ընդունման ժամկետանց յուրաքանչյուր օրացուցային օրվա համար: Կատարողի կողմից վճարման ենթակա սույն պայմանագրով նախատեսված տույժերն ու տուգանքը հաշվարկվում և առաջնահերթության կարգով հաշվանցվում են Պատվիրատուի կողմից Կատարողին փոխանցվող հերթական վճարների գումարների մեջ, իսկ դրանց անբավարարության դեպքում՝ ձևակերպվում են որպես բռնագանձման պահանջ:

13. Տույժերի և տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

15. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների արդյունքի համար նախատեսվում է երաշխիքային ժամկետ, որը սահմանվում է աշխատանքները ողջ ծավալով ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը:

16. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանգրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխատուցել Պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

17. Յուրաքանչյուր եռամսյակում փաստացի ստանձնվելիք պարտավորությունների չափերը չեն կարող գերազանցել *N 5* և *N 6* հավելվածներով նախատեսված գնման և վճարման ժամանակացույցով՝ տվյալ եռամսյակում նախատեսված գումարները: Յուրաքանչյուր եռամսյակում նախատեսված գումարների չափով պարտավորությունները ստանցվում են, եթե 2009 թ. պետական բյուջեում չեն կատարվել փոփոխություններ: Փոփոխություններ կատարվելու դեպքում տվյալ եռամսյակում պարտավորությունները /փաստացի առաջացող/ ստանցվում են փոփոխված գումարների չափով /պատվիրատուն իրավասու է միակողմանի պակասեցնել կամ ավելացնել գումարները/:

IV. Պայմանագրի ժամկետը

18. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու Կողմերի ստորագրության պահից և գործում է մինչև երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

V. Աշխատանքների ընդունման կարգը

19. Աշխատանքի փուլերը Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 5 հավելված՝ «Աշխատանքի գնման ժամանակացույցով» սահմանված ժամկետներում՝ Պատվիրատուին դրանից ոչ պակաս, քան 5 աշխատանքային օր առաջ ուղարկելով Աշխատանքի փուլի հանձնման-ընդունման արձանագրության լրացված, ստորագրված ու կնքված հինգ օրինակներ, որոնց ձևը բերված է սույն պայմանագրի N 7 հավելվածում: Նշված արձանագրությունները պետք է ստորագրված լինեն նաև հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող անձանց կողմից: Ընդունմանը ներկայացվող աշխատանքները համատեղ զննվում են Պատվիրատուի և Կատարողի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում և դրանք ընդունելու դեպքում Պատվիրատուի ներակացուցիչը զննության ավարտի պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում է Կատարողից ստացված արձանագրությունները, որոնց մեկ օրինակը հանձնում է Կատարողի ներկայացուցչին:

20. Պատվիրատուի ընդունմանը առաջին անգամ ներկայացված Աշխատանքի որևէ փուլը վերջինիս կողմից չընդունելու դեպքում, նա զննության ավարտի պահից տաս աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում Աշխատանքի այդ փուլն չընդունելու հիմնավորված գրավոր մերժում, նշելով թերությունները և՝

ա) կամ դրանք վերացնելու ու փուլն ընդունմանը վերստին ներկայացնելու ժամկետը,

բ) կամ սույն պայմանագիրը միակողմանի կարգով վաղաժամկետ լուծելու մասին որոշումը՝ եթե առկա են սույն պայմանագրի *28-րդ* կետում նշված հիմքերը:

21. Պատվիրատուի ընդունմանը երկրորդ անգամ ներկայացված Աշխատանքի փուլը վերջինիս կողմից չընդունելու դեպքում, նա զննության ավարտի պահից տաս աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում Աշխատանքի փուլն ընդունելու հիմնավորված գրավոր մերժում, նշելով թերությունները և՝